ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **28/06/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Աշոտ Աղաջանյանը, Ավագ Ասատրյանը, Աննա Ավետիսյանը, Մարինե Գրիգորյանը, Գեվորգ Դավթյանը, Դավիթ Դավթյանը, Հայկ Հակոբյանը, Անի Հարությունյանը, Ջիվան Մարգարյանը, Արմենակ Միրզախանյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝
Գրիգոր Ասատրյանը, Նարա Հովհաննիսյանը, Դավիթ Այվազյանը, Դավիթ Հարությունյանը, Վարդան Խաչատրյանը, Նարեկ Հովսեփյանը, Աննա Կարապետյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Հակոբջանյանը

Նիստը արձանագրում էր եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ, աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Կորյուն Մուրադյանը

Ավագանու նիստն իրավազոր էր և հայտարարվեց նիստը բացված:

Նիստը ուղիղ հեռարձակվում էր:

Նախքան նիստի օրակարգի հաստատելը համայնքի ղեկավար Ա. Հակոբջանյանը առաջարկեց օրակարգում ավելացնել ևս մեկ հարց «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրում գտնվող հողամասն անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվություն) Հայաստանի Հանրապետությանը օտարելու մասին»:

Դրվեց քվեարկության

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 19-ի թիվ 21-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի արոտավայրերի և խոտհարքների օգտագործման համար վճարի չափ սահմանելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումն ապահովելուն համաձայնություն տալու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող տարածքի վարձակալության պայմանագիրը երկարաձգելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:
7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Շիրակի փողոց, նրբանցքը վերանվանելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրում գտնվող հողամասն անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվություն) Հայաստանի Հանրապետությանը օտարելու մասին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 21-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 1818900.5 հազար դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 1827418.1 հազար դրամ» բառերով:
2. Որոշման 1-ին կետի2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 2620724.9 հազար դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 2629242.5 հազար դրամ» բառերով:
3. Որոշման 3-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ հատվածներում կատարել փոփոխություն՝ համաձայն 1, 2 և 3 հավելվածների:

Դավիթ Այվազյանը մանրամասն ներկայացրեց բյուջեում կատարվող փոփոխությունը, առաջարկեց՝

1. Սիսիան համայնքի պանթեոնի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար հատկացնել 750000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ.
2. Սիսիան համայնքի պանթեոնի վերակառուցման աշխատանքների փորձաքննության փաստաթղթերի ձեռքբերման համար հատկացնել 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ.
3. 4500000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել 08.2.7 ծրագիր 5113 հոդվածին՝ Սիսիան համայնքի պանթեոնում հուղարկավորված Վահե Հովսեփի Հովսեփյանի /զոհված 23.09.2022թ./, Սերժ Սամվելի Հովսեփյանի /զոհված 15.11.2022թ./ և Էդգար Վահանի Սուլեյմանյանի /զոհված 17.05.2023թ./ շիրմաքարերի տեղադրման համար:
4. 1600000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ՝ սյուն թվականի փետրվարի 21-ին Սիսիան համայնքի և «Շեն» բարեգործական հասարարական կազմակերպության հետ կնքված թիվ Շ/1-23 պայմանագրի շրջանակում «Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի գյուղի խմելու ջրի ավազանի և 700մ ջրագծի վերանորոգում» ծրագրի 7968800 (յոթ միլիոն հինը հարյուր վաթսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամի ընդհանուր վերանորոգման աշխատանքների Սիսիան համայնքի ներդրում:

Առաջարկեց վարչական բյուջեի պահուստայի ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ տեղափոխել 01.6.1 ծրագիր 4823 հոդված՝ Շաղատ, Աղիտու, Անգեղակոթ, Բալաք և այլ բնակավայրերի ջրօգտագործման թույլատվությունների ձեռքբերման համար:

Նախկին Գորայք համայնքի Ծղուկ բնակավայրի կենցաղի տան տանիքի արևային կայանների կառուցման աշխատանքների համար, պետության մասնաբաժինը վճարելու նպատակով նախատեսվում է 06.1.1 ծրագիր 5113 հոդվածում ավելացնել 8517600 (ութ միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որը տրամադրվել է պետության կողմից և պլանավորվել է ֆոնդային բյուջեի /ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)/ մասում:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N1477-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում գտնվող արոտավայրերի և խոտհարքների վճարի չափ սահմանել տվյալ արոտավայրի և խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարողին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի ժ/պ Դավիթ Հարությունյանը ներկայացրեց, որ Սիսիան համայնքի վարչական տարածքում առկա է համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության արոտավայրեր և խոտհարքներ, այդ հողամասերը վարձակալության իրավունքով կտրամադրվի քաղաքացիներին՝ կենդանիների արածեցման և խոտհնձի նպատակով: Բյուջեի եկամտային մասը կավելանա, որոնք կուղղվեն համայնքի հետագա ծրագրերի իրականացմանը: Դրույքաչափում փոփոխություն չի եղել:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ն/

Լսեցին

ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2030 ՕՐԱԿԱՐԳԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Համաձայնություն տալ Սիսիան համայնքի մասնակցությանը «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին:
2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Սիսիան համայնքի 2023թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Գրիգոր Ասատրյանի ներկայացմամբ ԳՄՀԸ դրամաշնորհային մրցույթին մասնակցելու և համաֆինանսավորումն ապահովելու նպատակն է համապատասխան ավտոաշտարակի ձեռքբերումը, որը կապահովի անխափան գիշերային լուսավորություն, վթարների ժամանակին վերացում, ինչպես նաև, վթարների կանխարգելիչ-պրոֆիլակտիկ աշխատանքների ապահովում: Սիսիան համայնքի բոլոր 36 բնակավայրերը կստանան միաժամանակյա և որակյալ ծառայության մատուցում փողոցային լուսավորության անխափան շահագործման համար:

Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսությունը կունենա հավելյալ միջոց ծառերի էտման, տանիքների վերանորոգման, ֆասադային պատերի վրա աշխատելու մասնագիտացված տեխնիկա՝ ավտոաշտարակ: Դրանից բացի, բարձրաձայնվող մի շարք խնդիրներ կստանան մշտական և վերջնական լուծումներ, ինչպիսիք են խաթարված փողոցային լուսավորությունը, չէտված բարձրահասակ ծառերը, կտուրների և տանիքների վերանորոգման, սառույցների և

ձնահոսքի կանխարգելման, շենքերի ֆասադային մասի մաքրման-հարդարման աշխատանքների ապահովումը:

Հիմնական ակնկալվող արդյունքներն են հանդիսանալու խնամված և լուսավորված փողոցներն ու շենքերը, կոմունալ տնտեսության արագահաս և անխափան գործունեությունը, վթարավերականգնման աշխատանքների ժամանակին և որակով կազմակերպումը:

Կարեն Հովհաննիսյանը ավելացրեց, որ մեքենայի վրա տարվա ընթացքում սպասարկման համար ավելի շատ գումար է ծախսվում, քան նորի ձեռքբերումը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով և 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից:

Նարա Հովհաննիսյանը նշեց, որ կարգի ընդունման նպատակն է համայնքի սոցիալապես անապահով բնակչության, պետական բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի հատուցման, համայնքի հանրակրթական դպրոցների գործունեության աջակցման, զոհված զինծառայողների, զինծառայողների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման աջակցմանն ուղղված դրամական օգնության տրամադրումը, որով կկանոնակարգվի համայնքի կամավոր խնդիրների լուծման գործընթացը:

Ավագանու անդամ Հրաչյա Դանիելյանը հարցրեց, թե ով է որոշում ընտանիքը անապահով է, թե ոչ;

Նարա Հովհաննիսյանը պատասխանեց, որ հիմնականում համարվում են այն անձինք, ովքեր նպաստառու են: Մինչև հանձնաժողովի որոշում կայացնելը կատարում են տունայցեր, կարգավիճակը ստուգում, նոր որոշում դրամական օգնության չափը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34-Ա/

Լսեցին

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածով ու նկատի ունենալով քաղաքացի Նորվարդ Ստեփանի Խաչատրյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկը

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի և քաղաքացի Նորվարդ Ստեփանի Խաչատրյանի միջև Շաղատ բնակավայրի 1-ին փողոց թիվ 6 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքից՝77.8քմ մակերեսով տարածքի՝ չօգտագործվող լվացքատան շենքի վերաբերյալ 2022 թվականի հուլիսի 1-ին կնքված վարձակալության պայմանագիրը և վարձակալության պայմանագրի նոր ժամկետ սահմանել 2024 թվականի հուլիսի 1-ը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարողին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Վարդան Խաչատրյանը ներկայացրեց, որ վարձակալը պարտաճանաչորեն վճարել է վարձավճարը և չի խախտել պայմանագրի կետերը, նպատակահարմար է երկարաձգել պայմանագիրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Աննա Գառնիկի Կարապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալին վերապահել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և համայնքապետարանի կանոնադրությամբ սահմանված գործառույթներ:
3. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող աշխատանքային օրվանից:

Համայնքի ղեկավար Արմեն Հակոբջանյանը նշեց, որ Աննա Կարապետյանը իր դիմումի համաձայն հրաժարվել է աշխատակազմի քարտուղարի պաշտոնից և քանի որ հասիքացուցակով մյուս տեղակալի հաստիքը ազատ է, առաջարկեց նրան նշանակել այդ պաշտոնում, նկատի ունենալով նրա աշխատանքային փորձը՝ իր գիտելիքներով կօգնի ֆինանսական մասը ապահովելու համար: Շնորհակալություն հայտնեց տիկին Կարապետյանին այդ դժվար օրերին հավուր պատշաճի իր աշխատանքը կատարելու համար:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԻ ՓՈՂՈՑ, ՆՐԲԱՆՑՔԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով ու նկատի ունենալով Սիսիան համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի Շիրակի փողոց, նրբանցքը վերանվանել Շիրակի փողոց 4-րդ նրբանցք:
2. Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարողին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԳԵՂԱԿՈԹ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածով և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետ Ռ. Ղուկասյանի 2023 թվականի հունվարի 31-ի N01/12/00644-2023 գրությունն ու համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայր 1-ին փողոց թիվ 7/1 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.07300հա հողամասը (ծածկ.՝ 09-013-0028-0010) առողջության առաջնային պահպանման նոր շենքի կառուցման համար անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվություն) օտարել Հայաստանի Հանրապետությանը:
2. Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարողին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Վարդան Խաչատրյանի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետությանը նվիրելու նպատակը Անգեղակոթ բնակավայրում բուժամբուլատորիայի կառուցելն է, որը կծառայի և հարակից բնակավայրերի բնակչությանը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38-Ա/

Ավագանու անդամներ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կորյուն Մուրադյանը

_____